

# ԹԵՅ

Այս շաբաթ օրը Կարենի ծննդյան օրն է և 3 ժամ հետո նրա մոտ կգան հյուրեր: Նրան պետք է արագ թեյ եռացնել հյուրերին հյուրասիրելու համար: Կարենն իր տանը ունի շատ մեկլիտրանոց թեյամաններ (կարելի է համարել, որ դրանց քանակը անվերջ է), իսկ վարդակը միայն մեկն է: Քանի որ ջուրը շատ երկար է եռում, ապա Կարենը 3 ժամվա կհասցնի եռացնել ամենաշատը մի անգամ: Բայց Կարենը բավականին խելացի տղա է և արագ գտավ ելքը: Նա պահարանից հանեց  $n$  էլեկտրական բաժանարար, ընդ-որում  $i$ -րդ բաժանարարի մեջ կա  $a_i$  անցք: Այժմ Կարենը մտածում է, թե ինչպե՞ս միացնի բաժանարարները և այդ համակարգը միացնի վարդակին, որ օգտագործի մաքսիմալ թվով թեյնիկներ:

Ձեզնից պահանջվում է լուծել Կարենի առջև դրված խնդիրը:

## Մուտքային տվյալներ

Մուտքի առաջին տողը պարունակում է  $n$  բնական թիվը ( $1 \leq n \leq 10^5$ ): Երկրորդ տողում տրված են  $a_i$  բնական թվերը ( $1 \leq a_i \leq 10^3$ ) բացատներով բաժանված:

## Ելքային տվյալներ

Պետք է արտածել խնդրի պատասխանը:

## Օրինակներ

N°	stdin	stdout
1	1 1	1
2	1 3	3